ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմը Սովետական Միության ավելի քան կես-դարյա պատմության ընթացքում ամենաբախտորոշ իրադարձությունն էր: Սանձազերծելով պատերազմը Սովետական Միության դեմ, գերմանա-ֆաշիստական զավթիչներ ձգտում էին նվաճել և մասնատել ՍՍՀՄ տերիտորիան, գաղութացնել այն:

Հայրենական մեծ պատերազմը սկսվեց 1941 թ. հունիսի 22-ին, ժամը 4-ին և ավարտվեց 1945 թ. մայիսի 8-ին, տևելով 1418 օր:

Պատերազմական գործողությունները ծավալվեցին Բարենցի ծովից մինչև Սև ծովը, ուղիղ գծով մոտ 3000 կմ երկարությամբ, իսկ երբեմն՝ մոտ 6000 կմ: Պատերազմի առաջին շրջանում հաջողությունը մեծ մասամբ թշնամու կողմն էր:

1941 թ. հունիսի 22-ին, անակնկալ կերպով անցնելով հարձակման և ունենալով քանակական ու տեխնիկական գերազանցություն, թշնամին Սովետական Միության արևմտյան սահմանների բոլոր մասերում սկսում է նետել մեր սահմանապահ զորամասերին ու պետական սահմանի մոտակայքում դասավորված կարմիր բանակի զորքերին: Թշնամու ավիացիան մասսայական հարվածներ է հասցնում մեր օդանավակայաններին, տանկային ու հրետանային պարկերին, երկաթուղային կարևորագույն հանգույցներին: Հուլիսի 9-ին ռազմաճակատի գիծն արդեն անցնում էր Պյարնու, Տարտու, Պսկով, Դրիսսա, Վիտեբսկ, Նովգորոդ-Վոլինսկ, Ժիտոմիր, Բերդիչև, Ստարո-Կոնստանտինով, Կամենեց-Պոդոլսկի, Մոգիլյով-Պոդոլսկի, Պրուտ, Դանուբ, Սև ծով բնագծերով:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը ձեռնարկում են արտակարգ ու վճռական միջոցառումներ թշնամու առաջխաղացումը դանդաղեցնելու և ապա՝ կասեցնելու համար:

Հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի կեսերը տեղի են ունենում պաշտպանական կատաղի ճակատամարտեր Լենինգրադի ուղղությամբ, Ուկրաինայի տերիտորիայում: Օգոստոսի 5-ից մինչև հոկտեմբերի 16-ը անձնուրաց պայքար են մղում Օդեսայի հերոս պաշտպանները: Օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 6-ը տեղի են ունենում կատաղի մարտեր Ելնյայի մատույցներում, ուր թշնամին պարտություն է կրում: Մանր մարտերից հետո մեր զորքերը թողնում են Սմոլենսկը: Սեպտեմբերի 6-ին Հիտլերը հրաման է տալիս հարձակման անցնել Մոսկվայի ուղղությամբ և գրավել այն:

Սկսվում է մեծագույն պայքարը մայրաքաղաքի մատույցներում: Դեկտեմբերի 6-ից մինչև 1942 թ. հունվարի 5-ը տեղի է ունենում կարմիր բանակի առաջին լուրջ հակահարձակումը Մոսկվայի մոտ, ուր թշնամին կրում է

առաջին մեծ պարտությունը: Ազատագրվում են Ելց, Խատրա, Կալինին, Վոլոկոլամսկ, Նարո-Ֆոմինսկ քաղաքները և հարյուրավոր գյուղեր: Դեկտեմբերի 7-ին հաջոնական ավիացիան ու ծովային հավաքորմը գրոհում են ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան բազաները: Սկսվում է պատերազմը ԱՄՆ-ի ու Ճապոնիայի միջև:

Պատերազմի հենց առաջին օրերին Անգլիայի պրեմիեր-մինիստր Ու. Չերչիլը և ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտը իրենց կառավարությունների անունից հաղորդում են, որ աջակցելու են Սովետական Միությանը՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պայքարում: Այդ ոգով է երույթ ունենում նաև ֆրանսիական դիմադրական շարժման ղեկավար գեներալ Դը Գոլը:

Սովետական ժողովրդի անհողդողդ կամքը, նրա զինված ուժերի մասսայական հերոսությունը ի կերև հանեցին կայծակնային արագությամբ Սովետական Միությանը հաղթելու հիտլերյան պլանները:

Նոյեմբերի 6-ից Մոսկվայի տակ սկսված մեր հակահարձակումը շարունակվում է մինչև 1942 թ. ապրիլի 20-ը: Թշնամին ետ է շպրտվում 100—350 կմ դեպի արևմուտք: Ըստ գերմանական IV բանակի զորահրամանատար գեներալ Բյումենտրիտի խոստովանության, միայն իր բանակը Մոսկվայի հակատամարտում կորցրել է 97 հազար մարդ կամ ողջ անձնակազմի 45 տոկոսը: Կարմիր բանակի զորքերը ազատագրում են Մալոյարոսլավեցը և Մոժայսկը: Հարավում մեր զորքերը հարձակման են անցնում Բարվենկովոյի ուղղությամբ: Արևմտյան ռազմանակատի զորքերը ազատագրում են Յուխնով քաղաքը: Մայիսի 12—30-ը կատաղի հակատամարտեր են մղվում Խարկովի համար: Հունիս-հուլիս ամիսներին պաշտպանական ծանր կռիվներ են մղվում Վորոնեժի և Վորոշիլովգրադի ուղղությամբ: Ֆաշիստական հորդաները ճնշվում են դեպի Վոլգա և Ստալինգրադ, իսկ հուլիսի 25-ից՝ նաև դեպի Հյուսիսային Կովկաս: Թշնամին կրկին նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում և օգտվելով երկրորդ հակատի բացակայությունից, աշխատում է գրավել ողջ Կովկասը, գուրս գալ Բաքու, իսկ Ստալինգրադը գրավելուց հետո կրկին գրիչավոր հարվածն ուղղել սովետական մայրաքաղաքի դեմ: Նոյեմբերի առաջին օրերին ռազմանակատի գիծն անցնում էր Լենինգրադ, Նովգորոդ, Ստարայա Ռուսսա, Կալինին, Վյազմա, Կալուգա, Տուլա, Վորոնեժ, Սերաֆիմովիչ, Ստալինգրադ, Էլիստա, Մոզդոկ, Օրջոնիկիձե գծով, իսկ Սև ծովի ափերին թշնամին հասել էր մինչև Դելենջիկ: Դերությունը ծանր էր ու արտակարգ լարված: Երկարատև նախապատրաստությունից հետո նոյեմբերի 19-ին կարմիր բանակի երեք ռազմանակատների զորքերը հուժկու հարձակման են անցնում Ստալինգրադի մոտ և մինչև 1943 թ. փետրվարի 2-ը շրջապատում և գլխովին ջախջախում են ֆաշիստական զորքերի խմբավորումը, գերելով մոտ 100 հազար հիտլերականների: Այս ծանր պարտությունը ըստ էության հանդիսացավ ֆաշիստական Գերմանիայի կրախի սկիզբը: Շուտով հարձակման են անցնում նաև Անդրկովկասյան ռազմանակատի զորքերը և թշնամուն ստիպում հահանջել Կովկասյան նախալեռներից դեպի հյուսիս: Ամբողջ աշխարհում ցնծությամբ ընդունվեց Ստալինգրադի տակ կարմիր բանակի տարած հաղթանակի լուրը:

1943 թ. վճռական բեկման տարի էր ոչ միայն Հայրենական մեծ պատերազմի, այլև ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Ստալինգրադի մոտ շրջապատված ֆաշիստական զորքերի ջախջախումից հե-

տոն. հունվարի 12—18-ը Լենինգրադի և Վոլխովի ռազմաճակատների զորքերը Բալթյան նավատորմի հետ ճեղքում են Լենինգրադի բլոկադան: Հունվարի 25-ին ազատագրվում է Վորոնեժ քաղաքը, փետրվարի 8-ին՝ Կուրսկը, իսկ մարտի 3-ին՝ Ռժևը: Շուտով ազատագրվում է նաև Վյազման (մարտի 12-ին): Մարտի 13-ին դաշնակիցները ավարտում են իտալո-գերմանական զորքերի ջախջախումը Հյուսիսային Աֆրիկայում: Հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 5-ը իրականացվում են պաշտպանական և ապա հարձակողական օպերացիաներ Կուրսկի աղեղի շրջանում, որն ավարտվում է կարմիր բանակի փայլուն հաղթանակով: Օգոստոսի 7-ից մինչև նոյեմբերի 6-ը ազատագրվում են Խարկովը, Բելգորոդը, Սմոլենսկը, Դնեպրոպետրովսկը, Դնեպրոդզերժինսկը, Կիևը:

1943 թ. Միջերկրական ծովի ավազանում իրենց գործողություններն են ուժեղացնում դաշնակիցները: Սեպտեմբերի 8-ին Իտալիան կապիտուլյացիայի է ենթարկվում: Նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը Թեհրանում տեղի է ունենում ՍՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ղեկավարների կոնֆերանսը, ուր մշակվում են ֆաշիստական Գերմանիայի դեմ համաձայնեցված գործողություններ մղելու մի շարք պլաններ, այդ թվում երկրորդ ճակատ բացելու հարցը:

1944 թ. ընթացքում կարմիր բանակը լիովին ազատագրում է սովետական տերիտորիան: Տարեսկզբին լիովին վերացվում է Լենինգրադի բլոկադան (հունվարի 27): Փետրվարի 17-ին Ուկրաինական II ռազմաճակատը ավարտում է Կորսուն-Շևչենկովսկու շրջանում շրջապատված ֆաշիստական զորքերի խմբավորման ջախջախումն ու գերումը: Մարտի 26-ին նույն ռազմաճակատի զորքերը դուրս են գալիս սովետական պետական սահմանը Պրուտ գետի ափին: Ապրիլի 10-ին ազատագրվում է Օդեսան: Մայիսի 9-ին սովետական զորքերը հերոսական գրոհով ազատագրում են Սևաստոպոլը: Հուլիսի 3-ին Բելոռուսական ռազմաճակատների մարտիկները ազատագրում են Մինսկը: Հուլիսի 17-ին Ուկրաինական I ռազմաճակատի զորքերն անցնում են սովետալեհական սահմանը: Կարմիր բանակը մեկը մյուսի ետևից ազատագրում է սովետական Մերձբալթյան հանրապետությունների քաղաքները: Հունիսի 4-ին անգլո-ամերիկյան զորքերը մտնում են Հռոմ, իսկ հունիսի 6-ին խոշոր դեսանտ են հանում Նորմանդիայում: Սովետական բանակների հարվածների տակ դեպի արևմուտք են հահանջում ֆաշիստական Գերմանիայի հորդաները: Օգոստոսի 31-ին Ուկրաինական II ռազմաճակատի զորքերը արդեն Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում էին, իսկ սեպտեմբերի 15-ին Ուկրաինական III ռազմաճակատի մարտիկները ազատագրում են Բուլգարիայի մայրաքաղաք Սոֆիան: Այսպիսով, շարքից դուրս են գալիս ֆաշիստական Գերմանիայի երեկվա դաշնակիցները Ռումինիան, Բուլգարիան, ապա նաև Հունգարիան ու Իտալիան: Լեհաստանը, Ալբանիան, Հարավսլավիան դեռ են շարունակում օկուպացիոն ռեժիմի լուծը:

1944 թ. վերջերին սովետա-գերմանական ռազմաճակատի գիծն արդեն անցնում էր սովետա-նորվեգական պետական սահմանով, Ֆինլանդիայի սահմանով, Ռիգայից արևելք, Նյազվա, Շյաուլյայ, Կաունասից արևմուտք, Սուվալկի, Թադոմից արևելք, Սանդոմիրից արևմուտք, Մելեց, Ստանիսլավից արևմուտք բնագծերով: Արևմտյան Եվրոպայում ազատագրված էր նաև Փարիզը: Սեպտեմբերի 4-ին Ֆինլանդիան ևս դադարում է Գերմանիայի դաշնակիցը լինելուց:

1945 թ. սկզբից սովետական զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարությունը կատարում է գործող բանակների և ռազմանավատների ուժերի վերախմբավորումներ այն հաշվով, որպեսզի Բեռլինի ուղղությամբ հարձակվող մեր զորքերը զենքերի ու ռազմական տեխնիկայի բոլոր տեսակներում բացարձակ գերակշռություն ունենան:

Փետրվարի 4—11-ը Յալթայում տեղի է ունենում երեք տերությունների ղեկավարների կոնֆերանսը, ուր քննարկվում և ընդհանուր գծերով համաձայնեցվում են ֆաշիստական Գերմանիայի դեմ եզրափակիչ ռազմական գործողությունների պլանները, հետպատերազմյան կարգավորման մի շարք պրոբլեմներ, ինչպես նաև իմպերիալիստական Ճապոնիայի պարտությունն արագացնելու միջոցառումները:

Հունվարին Ուկրաինական III ռազմանավատի զորքերը Բուդապեշտի շրջանում ետ են մղում գերմանական հզոր խմբավորման կատաղի գրոհները: Հունվարի 12-ից մինչև փետրվարի 3-ը Ուկրաինական I և Բելոռուսական I ռազմանավատների բանակները իրականացնում են հայտնի Վիսլա-Օդերյան օպերացիան: Հունվարի 17-ին Բելոռուսական I ռազմանավատի և Լեհական I բանակի զորքերը ազատագրում են Լեհաստանի մայրաքաղաք Վարշավան, ապա Չենստոխովը, Լոձը, Կրակովը, Կատովիցեն, Պոզնանը: Փետրվարի 13-ին Ուկրաինական II և III ռազմանավատների զորքերը ծանր մարտերից հետո գրավում են Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտը: Մարտի 30-ին Բելոռուսական II ռազմանավատի մարտիկները մտնում են Դանցիգ, իսկ Ուկրաինական II ռազմանավատի զորքերը՝ Բրատիսլավա: Ապրիլի 13-ին Ուկրաինական II և III ռազմանավատների զորամասերը գրավում են Վիեննան:

Մանրակրկիտ նախապատրաստություններից հետո ապրիլի 16-ին մոտ 2,5 միլիոն անձնակազմով և վիթխարի չափերի հասնող ռազմական տեխնիկայով հարձակման են անցնում Բելոռուսական I և II և Ուկրաինական I ռազմանավատների զորքերը: Սկսվում է պատերազմական գործողությունների եզրափակիչ էտապը: Մայիսի 1-ին կարմիր բանակի զորքերը գրավում են Բեռլինի գլխավոր փողոցները և կարմիր դրոշ բարձրացնում Ռայխստագի վրա, իսկ մայիսի 2-ին ավարտում են Բեռլինում շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումը և լրիվ տիրում Գերմանիայի մայրաքաղաքին: Մայիսի 9-ին Ուկրաինական I ռազմանավատի զորքերը ազատագրում են Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագան:

Մայիսի 8-ին Պոտսդամում ստորագրվում է ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Մայիսի 9-ին սովետական ժողովուրդը և ողջ աշխարհը տոնում են մեծ հաղթանակի օրը:

* * *

Սովետական ժողովրդի հաղթանակն ապահովող բոլոր գործոնների շարքում հիմնականն ու որոշողը հանդիսանում էր մարդկային ռեսուրսների մոբիլիզացիան, նրանց նպատակասլաց օգտագործումը ճակատում ու թիկունքում:

1941—1945 թթ. զենքի ու աշխատանքի ընդունակ սովետական բոլոր քաղաքացիները իրենց ավանդն են ներդրել գործող բանակում, թիկունքում և պարտիզանական ջոկատների շարքերում: Եթե 1937 թ. երկրի զինված ուժե-

ում ծառայում էր 1.433 հազար մարդ, ապա 1941 թ. սկզբին նրանց թիվը կազմում էր 4.207 հազար մարդ, իսկ 1941 թ. հունիսի 30-ին՝ 5.300 հազար մարդ: Միայն 1941 թ. վերջերին, ամենածայրահեղ լարված օրերին կազմակերպվել են 262 հրաձգային դիվիզիա, 159 հրաձգային բրիգադա, 76 տանկային բրիգադա և ավելի քան 100 տանկային առանձին գումարտակներ: Նոր ստեղծված դիվիզիաներից 194-ը և բրիգադաներից 94-ը կարճ ժամանակից հետո ուղարկվեցին գործող բանակ: Ժողովրդի հայրենասիրական բուռն ոգևորումների դրսևորում կարելի է համարել այն փաստը, որ ստեղծվեց ժողովրդական աշխարհազորի 24 դիվիզիա: Ի տարբերություն մեր երկրի մղած նախորդ պատերազմների, երբ կանանց թիվը բանակում շատ աննշան էր լինում, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ 530 հազար կանայք և աղջիկներ ծառայում էին զործող բանակում՝ բուժհաստատություններում, կապի զորամասերում, շտաբներում: Քիչ չէին կին պարտիզաններ, սնայպերներ, օդաչուներ: Զուտ կանանցից էին կազմված 3 ավիագնդեր: Հայրենական մեծ պատերազմում կանանցից 86 հոգի արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման:

Դժվարագույն հարցերից մեկը հրամանատարական կազմի պատրաստման հարցն էր: Հայրենական մեծ պատերազմի տարիներին իսկ թիկունքում ստեղծվեցին բազմաթիվ նոր ռազմական ուսումնարաններ: Արևմուտքից արագ փոխադրվեցին օկուպացիայի ենթարկված տերիտորիաներում եղած ռազմական ուսումնարանները: Ըստ պաշտոնական տվյալների, պատերազմի տարիներին երկրում գործում էին 230 ուսումնարան և 200 կարճատև կուրսեր, չհաշված ակադեմիաները: Պատերազմի չորս տարիների ընթացքում պատրաստվել և զորամասեր են ուղարկվել ամենատարբեր մասնագիտության 2 միլիոն սպաներ:

Թեպետև առաջին համաշխարհային պատերազմի հետ համեմատած Հայրենական պատերազմի տարիներին վիրավորների քանակը մի քանի անգամ շատ էր, սակայն վիրավորներին ցույց տրվող բուժօգնությունը աստիճանաբար հասավ այնպիսի բարձրության, որ նրանց 72 տոկոսը առողջանալուց հետո կրկին վերադառնում էր զորամասերը:

Պատերազմը գերմանական ֆաշիզմի դեմ համաժողովրդական պատերազմ էր: Ժամանակավորապես օկուպացիայի ենթարկված շրջաններում գործել են 6200 պարտիզանական ջոկատներ, որոնց կազմում եղել է 1300 հազար մարդ, բնդ որում Ուկրաինայում գործում էին 600 հազար պարտիզաններ, Բելոռուսիայում՝ 370 հազար, ԽՍՖՍՀ արևմտյան մարզերում՝ 260 հազար: Ավելի քան 180 հազար պարտիզաններ պարգևատրվել են շքանշաններով, 260 հոգու շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում: Պարտիզանների գործողությունների շնորհիվ ոչնչացվել են 110 հազար վագոն, 10 հազար շոգեկառք, 12 հազար կամուրջ, 65 հազար ավտոմեքենա, 2300 տանկ, 1100 օդանավ:

Շատ մեծ է սովետական գիտնականների և կոնստրուկտորների դերը հաղթանակն ապահովելու գործում: Նրանց տաղանդով ու հանճարով ստեղծվեցին նորանոր տիպի մարտական ինքնաթիռներ, տանկեր, հրանոթներ, ռեակտիվ հրետանի, կապի միջոցներ և այլն, որոնք ապահովեցին բանակի հզորությունն ու մարտունակությունը:

Պատերազմի տարիներին, շնորհիվ սովետական ժողովրդի անձնուրաց աշխատանքի, մեր երկիրն աստիճանաբար սկսեց գերազանցել ֆաշիստական

Գերմանիային հրանոթների, ականանետների, տանկերի, ինքնագնաց հրանոթների, մարտական օդանավերի և սպասազինման արտադրության բնագավառում: Բավական է ասել, որ միայն 1945 թ. մեր ռազմական արդյունաբերությունը արտադրել է մոտ 11 հազար տանկ, 91 հազար հրանոթ և ականանետ և 14600 մարտական օդանավ: Իսկ բնդհանրապես 1941 թ. հուլիսից մինչև 1945 թ. մայիսը ՍՍՀՄ-ում արտադրվել է 12 միլիոն հրացան, 6,1 միլիոն ավտոմատ, 960 հազար գնդացիր, 340 հազար ականանետ, 98 հազար հրանոթ (76 մմ-ից բարձր), 96 հազար տանկ և ինքնագնաց հրանոթ և 108 հազար մարտական ինքնաթիռ:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական բոլոր օրգանները, բանակի հրամանատարությունը, հասարակական կազմակերպությունները հաղթահարելով անլուր դժվարություններ, կրելով մեծ տառապանքներ, ոչ միայն ապահովեցին թշնամու ջախջախումը, այլև ձեռնամուխ եղան ավերված ու քարուքանդ եղած քաղաքների, գյուղերի, ճանապարհների, կամուրջների, արդյունաբերական ձեռնարկությունների, մշակույթի օջախների վերականգնմանը: Դժվարին և շատ մեծ խնդիր էր կազմակերպել ազատագրված Եվրոպական երկրներից և Գերմանիայից սովետական միլիոնավոր մարդկանց վերադարձը հայրենիք: Ֆաշիստական գերությունից, համակենտրոնացման ճամբարներից փրկված այդ հոծ մասսաներին հարկավոր էր տալ բուժօգնություն, սնունդ, հագուստ, տրանսպորտ և հոգալ նրանց աշխատանքի տեղավորելու մասին:

* * *

Սովետական ժողովրդի համաշխարհային պատմական հաղթանակի նվաճման գործում իր լուման ներդրեց նաև հայ ժողովուրդը: Զենքի ընդունակ համարյա բոլոր 18—50, իսկ երբեմն նույնիսկ 55 տարեկան տղամարդիկ կանչվեցին բանակ: Առանց վարանումի կարելի է ասել, որ Սովետական Հայաստանում ոչ մի ընտանիք չկար, որի հարազատներից որևէ մեկը չմասնակցեր պատերազմին: Հայ մարտիկները հանդես էին գալիս որպես հետևակայիններ, հրետանավորներ, հնձյալներ, տանկիստներ, կապավորներ, ինժեներներ, ծովայիններ, օդաչուներ, շտաբային ու թիկունքի ծառայության մասնագետներ, քաղաքական աշխատողներ և այլն:

Հայտնի է, որ Սովետական Միության կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության որոշմամբ անհրաժեշտ համարվեց ստեղծել ազգային դիվիզիաներ: Կարճ ժամանակի ընթացքում կոմպլեկտավորվեցին հայկական 390-րդ, 408-րդ, 89-րդ, 409-րդ և այլ դիվիզիաներ, որոնցից յուրաքանչյուրի մարտական ծառայությունները ու սխրանքները ոսկե տառերով են գրվել Հայրենական մեծ պատերազմի պատմության էջերում: 390-րդ հրաձգային դիվիզիան գնդապետ Զաքիյանի հրամանատարությամբ մասնակցել է Ղրիմի պաշտպանության կռիվներին: Ինքը, դիվիզիայի հրամանատար գնդապետ Զաքիյանը և կոմիսար Թ. Շահինյանը զոհվել են իրենց մարտական դիրքերում: 408-րդ հրաձգային դիվիզիան մասնակցել է Սև ծովի ափերի պաշտպանությանը, հատկապես բեժ կռիվներ է մղել Տուապսեի, Գելենջիկի, Գոյրդի, Շահումյանի շրջաններում, ուր շատ զոհեր է տվել: 409-րդ հրաձգային Կիրովոգրադյան Կարմրադրոշ Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր դիվիզիան մասնակցել է Հյուսիսային Կովկասի ազատագրության համար մղված մարտերին, Ուկրաինայի, Ռումինիայի, Հունգարիայի և Չեխոսլովա-

կիայի ազատագրմանը: 89-րդ Թամանյան կարմրադրոշ դիվիզիան փառահեղ մարտական ուղի է անցել Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին: Այդ դիվիզիաներից յուրաքանչյուրում սկզբնական շրջանում եղել են 14—15 հազար հայ մարտիկներ:

Հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև պարտիզանական շարժմանը: Երանք նույնիսկ ստեղծել էին զուտ հայկական պարտիզանական ջոկատներ (ինչպես օրինակ «Հաղբանակ» ջոկատը Ուկրաինայում, № 41 ջոկատը Լենինգրադի մարզում և այլն): Շատ ու շատ հայ պարտիզաններ փառքով են պսակել իրենց, արժանանալով կառավարական բարձր պարգևների, սովետական մարդկանց ջերմ սիրուն և շնորհակալությանը:

Պատերազմի տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, գրականության ու արվեստի բնագավառների աշխատողները իրենց ներդրումն են կատարել հաղթանակի գործում: Անխափան կերպով արտադրվում և բանակ ու թիկունք էր ուղարկվում հաց, միս, մրգեղեն, պղինձ, այումին, կարբիդ, կաուչուկ, սպիրտ, մեքենաներ, կոշիկ, տաք հագուստ և այլն, ինչ ստեղծվում էր Սովետական Հայաստանի աշխատավորների հերոսական ջանքերով: Հայ գրողներից, արվեստագետներից, գիտնականներից, կուսակցական աշխատողներից շատերը կռվել ու զոհվել են հայրենիքի համար մղված մարտերում:

Հայրենական պատերազմի տարիներին սփյուռքի հայության բացառիկ մեծամասնության համակրանքը Սովետական Միության, հակաֆաշիստական կոալիցիայի կողմն էր: Արտասահմանյան երկրներում բնակվող հայերը շատ լավ գիտեին, թե ֆաշիզմի հաղթանակը ինչ նակատագրական նշանակություն կարող է ունենալ Սովետական Հայաստանի, հայ ժողովրդի համար և ամենուրեք պայքարում էին ֆաշիզմի դեմ: Սփյուռքի հայությունն իր միջոցներով կարմիր բանակին է նվիրել «Սասունցի Դավիթ», «Հովհաննես Բաղրամյան տանկային շարասյուները և ցույց տվել նյութական այլ օգնություն:

Հայ ժողովրդի զավակներից շատերը պատերազմի բոցերում իրենց դրսևորեցին ոչ միայն որպես շարքային մարտիկներ, այլ նաև որպես ականավոր հրամանատարներ ու զորապետներ: Մի քանի տասնյակների է հասնում այն հայ սպաների ու գեներալների թիվը, որոնք պատերազմի տարիներին եղել են գնդերի, դիվիզիաների ու կորպուսների հրամանատարներ: Ռազմի դաշտում կատարած փայլուն սխրանքների համար մոտ 100 հայ մարտիկների շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում, ավելի քան 70000 հոգի պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով: Նելսոն Ստեփանյանին շնորհվել է կրկնակի հերոսի կոչում:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, երկրի զինված ուժերի դեկավարությունը բարձր են գնահատել հայ ժողովրդի ներդրումը Հայրենական մեծ պատերազմում: ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը այդ մասին ասել է. «Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ. Հայ մարտիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնուրաց պաշտպանել են մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան անդադրում աշխատել են թշնամու դեմ հաղթանակի նվաճման համար»: